մունքն է վարուցանք անել, որ կատարում է հրնագարեան Նոյ նահապետից ընդունուած ձևով և կարգով։ Նա հերկում է, վարում է, ցանում է, հնձում է ցորենի և հացաբոյսերի ամեն տեսակները այնպէս և այն եղանակով, ինչպէս որ նրա նախնիքներն են արել հարիւրաւոր և հազարաւոր տարիներ առաջ։ Տնային և դաշտային անհրաժեշտ գործիքների ու ամենակարևոր առարկաների մէջ ոչ մի նորութիւն, ոչ մի փոփոխութիւն ու յառաջադիմութիւն չէք տեսնի, այլ ամեն բան նահապետական, իւր սկզբնական նախական վիճակի մէջն է։

Մինչև ցարդ, նոյն իսկ թեթևաշարժ և յարմարաւոր սայլերի գործածութիւնն անգամ դեռ ևս չէ մտել Ուտիական աշխարհի ազգաբնակութեանց մէջ, այլ կոշտ ու կոպիտ և բարձր անիւներով վիթխարի սայլեր են այն ձևով, որ ձևով սրանց նախնիքն էին գործածում շատ դարերից ի վեր։ Միակ նորութիւնը և փոփոխութիւնը նըրանումն է, որ այդ ահագին անիւների շուրջը պատում են այժմս երկաթէ հաստ օղակով, որ պինդ և դիմացկուն լինի։ Այսպիսի խոշոր ու կոպիտ սայլերով իրենց նահապետական վար ու ցանքի հացահատիկները, կամ խոտ, վառելափայտ և ուրիշ ծանրութիւն կրելու համար բացառապէս գործ են ածում հսկայ և ուժեղ գոմէշներ։ Այս իսկ պատճառով տնային չորքոտանի կենդանիների մէջ ամենից պիտանին և ճանճոտ ու քարքարոտ հեղեղատներից սայլերը դուրս քաշելու յարմարը գոմէշն է, որի իւրաքանչիւրի